ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզում գենդերային քաղաքականության 2014 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին

h/h	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Քաղաքական և հասարակական կյանքում գենդերային հետազոտության իրականացում	Արարատի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը և գենդերային հարցերով մշտական հանձնաժողովը համայնքներում իրականացրել են հետազոտություն քաղաքական և հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց մասնակցության վերաբերյալ, որի արդյունքում շտեմարանը թարմացվել է:	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	Անվճար բուժհետազոտությունների կազմակերպում կանանց և տղամարդկանց առողջության	Արարատի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության	

	բարելավման նպատակով	**բաժնի և գենդերային հարցերով մշտական հանձնաժողովի, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից մարզում անց է կացվել կանանց և տղամարդկանց առողջության բարելավման նպատակով մի շարք միջոցառումներ: <<Լույս հայի աչքերին>> ծրագրի շրջանակներում անվճար հետազոտվել են շուրջ 4750 անձ, որից վիրահատվել են 285-ը, ինչպես նաև մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ կանանց առողջության պահպանման միամսյակի շրջանակներում մարզային բժշկական կազմակերպություններում տարբեր մասնագետների կողմից իրականացվել է <<Բաց դռների օրեր>>, որի շրջանակներում շուրջ 1290 կին անվճար ստացել է բժշկական խորհրդատվություն, որից 55-ը վիրահատվել է:**	